Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

CC BY NC SA

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3КП2
П-11

…ՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
…ԱԳԻՏ-ԲԱԺԻՆ

№ 3

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# Ռ. Կ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ յեվ ԲԱՆԱՁԵՎԵՐ

4—7 օգոստոսի 1922

ЗКП2
П--11

ՅԵՐԵՎԱՆ
1923

24 JUL 2013

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Կանոնադրություն Ռ. Կ. Կուսակցության . . .
2. Կուսակցության խնդիրները կոոպերացիայում .
3. Բանաձև ընկ. Զինովևի զեկուցման առթիվ հակախորհրդային կուսակցությունների և հոսանքների մասին . . . .
4. Բանաձև ընկ. Տոմսկու զեկուցման առթիվ արհմիությունների աշխատանքի արդյունքների մասին . . . .
5. Բանաձև ընկ. Սոկոլնիկովի զեկուցման առթիվ միջազգային քաղաքականության մասին .
6. Ռ. Կ. Կ. անդամների նյութական վիճակի բարելավման մասին . .
7. Կուսակցական ակտիվ աշխատավորների նյութական դրության մասին . .
8. Բանաձև ընկ. Զինովևի զեկուցման առթիվ Կոմինտերնի IV Կոնգրեսի մասին . .


7369
1 DEC 2008
23 SEP 2006
38907

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ)

(Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիայի)

## I ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության անդամ է համարվում ամեն ոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպություններից մեկում, ենթարկվում է կուսակցության որոշումներին և մուծում է անդամավճարներ։

2. Նոր անդամներն ընդունվում են թեկնածուների թվից, որոնք անցել են քաղաքական դաստիարակության դպրոցը և թեկնածուական սահմանյալ ստաժը։

Թեկնածուներին կուսակցության անդամ ընդունելու կարգը հետևյալն է.—

ա. Սահմանվում է երեք կատեգորիա.— 1) բանվորներ և կարմիր-բանակայիններ՝ բանվորներից և գյուղացիներից, 2) գյուղացիներ (բացի կարմիր-բանակայիններից) և տնայնագործներ, որոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը, 3) մյուսները (ծառայողներ և այլն)։

բ) 1 և 2 կատեգորիային պատկանող անձերին կուսակցության անդամագրելու համար անհրաժեշտ է 3 տարվա ստաժ ունեցող 3 անդամի հանձնարարականը։ 3 կատեգորիային պատկանողների համար անհրաժեշտ է 5 տարվա ստաժ ունեցող 5 անդամի հանձնարարականը։

Ծանոթություն.— Հանձնարարական տվողները պատասխանատվություն են կրում հանձնարարվածների փոխարեն։ Անհիմն հանձնարարականների դեպքում ենթարկվում են կուսակցական տույժերի մինչև արտաքսում կուսակցությունից։

գ) Հանձնարարականների ստուգումը նախորդում է ընդունելության և դրվում է տեղական կուսակցական կոմիտեյի վրա։

դ) Կուսակցության մեջ ընդունվելու խնդիրը կանխապես քննվում է բջիջում, վճռվում է կազմակերպության ընդհանուր ժողովում և ույժի մեջ է մտնում կուսկոմի

հաստատումից հետո-առաջին կատեգորիայի համար՝ Գավկոմի, յերկրորդ ու յերրորդ կատեգորիայի համար՝ Նահանգկոմի։ Քաղաքների շրջանային ընդհանուր ժողովի վորոշումը հաստատվում է վերջինների։

ե) Այլ կուսակցություններից դուրս յեկածներն ընդունվում են 5 տարվա ստաժ ունեցող 5 անդամի հանձնարարականով, այն պայմանով սակայն, վոր անկախ ընդունվողի սոցիալական դրությունից անցնեն Նահանգկոմի անպայման հաստատումը։

զ) Յերիտասարդությունը մինչև 20 տարեկան հասակը ներփակյալ (բացառությամբ կարմիր-բանակայինների) կուսակցության մեջ է մտնում միմիայն Յերիտմիության միջոցով։

3. Վերևի կազմակերպության ամեն մի անդամ փոխադրվելով այլ կազմակերպության աշխատանքի շրջանը վերջինիս կողմից մտցվում է իր անդամների շարքը։

Ծանոթություն.— Կուսակցության անդամների փոխադրությունները միևնույն նահանգի սահմաններում տեղի յեն ունենում Նահանգկոմի համաձայնությամբ։ Փոխադրությունը մի ուրիշ նահանգ կատարվում է համաձայն կուսակցության Կենտկոմի սահմանած կանոնների։

4. Կուսակցությունից վորևէ մեկին հեռացնելու խնդիրը վճռվում է կամ այն կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից, վորտեղ ավյալ անձը անդամ է յեղել, կամ Նահանգական Ստուգիչ Հանձնաժողովի կողմից։ Հեռացման վորոշումն ույժի մեջ է մտնում Նահանգական կոմիտեյի հաստատումից հետո միայն, ընդ վորում դրա մինչև արտաքսումը ավյալ անձը հեռանում է կուսակցական աշխատանքից։ Հեռացված անդամների մասին հայտարարվում է կուսակցական մամուլի մեջ՝ հեռացման պատճառների հիշատակությամբ։

## II. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5. Կուսակցության անդամագրվել ցանկացող բոլոր անձնավորությունները անցնում են թեկնածուական ստաժը, վորը նպատակ ունի կուսակցության ծրագրի ու գործելակերպի հիմնավոր ծանոթացումը և թեկնածուի անձնական հատկությունների ստուգումը։

6. Թեկնածուներին ընդունելու կարգը (բաժանումը կատեգորիաների, հանձնարարականների բնույթը և նրանց ստուգումը, ընդունելու մասին հանած կազմակերպությունների վորոշումը և կոմիտեի հաստատումը) բոլորովին նույնն է, ինչ վոր կուսակցության անդամ ընդունելու կարգը։



7. Թեկնածուական ստաժը բանվորների և գյուղացիներից ու բանվորներից դուրս յեկած կարմիր բանակայինների համար սահմանված է 6 ամսից վոչ պակաս, գյուղացիների և տնայնագործների համար—1 տարի, մյուսների համար—2 տարի։

Ծանոթություն.—Այլ կուսակցություններից դուրս յեկածները, անկախ նրանց սոցիալական դրությունից, անցնում են թեկնածուական յերկամյա ստաժ։

8. Թեկնածուներին թույլատրվում է խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա լինել կուսակցական այն կազմակերպության բաց ընդհանուր ժողովներին, վորտեղ նրանք գրված են։

9. Թեկնածուները վճարում են սովորական անդամավճարը տեղական կուսկոմի գանձարկղը։

## III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

10. Կուսակցության կազմակերպչական կառուցվածքի ղեկավար սկզբունքն է հանդիսանում դեմոկրատիկ ցենտրալիզմը։

11. Կուսակցությունը կառուցված է դեմոկրատիկ ցենտրալիզմի հիմունքներով՝ ըստ տերիտորիալ հատկանիշի.— վորևէ շրջանի սպասարկելու համար հիմնած կազմակերպությունը համարվում է այդ շրջանի մասերը սպասարկող բոլոր այլ կազմակերպությունների գլխավոր մարմինը։

12. Տեղային հարցերի տնօրինման մեջ կուսակցական բոլոր կազմակերպություններն ել ավտոնոմ են։

13. Ամեն մի կազմակերպության բարձրագույն ղեկավար որգանն է հանդիսանում ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը։

14. Ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը ընտրում են կոմիտե, վոր և նրանց գործադիր մարմինն է հանդիսանում և ղեկավարում է տեղական կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը։

15. Կուսակցության կազմակերպության սխեման հետևյալն է.—

ա) Ռ. Ս. Ֆ. Ս. Հանրապետության տերիտորիայում—Համառուսական Համագումար, Կենտրոնական Կոմիտե։

բ) Ռ. Ս. Ֆ. Ս. Հանրապետության մեջ մտնող շրջաններում և Խորհրդային հանրապետություններում—Կենտ-

կոմի շրջանային բյուրոներ (կամ ազգային կոմկուսների շրջանային կոնֆերանսներ և համագումարներ—շրջանային կոմիտեներ և ազգկոմկուսների կենտկոմներ)։

գ) Նահանգներում—նահանգային կոնֆերանսներ—նահանգային կոմիտեներ։

դ) Գավառներում—գավառային կոնֆերանսներ—գավառային կոմիտեներ։

ե) Վիճակներում (волость)—վիճակային ժողովներ—վիճակային կոմիտեներ։

զ) Ձեռնարկություններ, գյուղեր, կարմիր բանակային մասեր, հիմնարկներ—բջիջների ընդհանուր ժողովներ—բջիջների բյուրոներ։

16 Հաշվետվության ենթակայության (подчинения) կարգը, կիրառումն և բողոքումն կուսակցական բոլոր վճիռների (վերին ատյանից դեպի ստորին) հետևյալն է— Համառուսական համագումար, կ. կոմ. շրջանային կոնֆերանսներ, շրջանային կոմիտեներ, նահանգային կոնֆերանս և այլն։

17. Կուսակցական աշխատանքի հատուկ ձևերի համար կազմակերպվում են առանձին բաժիններ (ազգային կանանց մեջ աշխատանք և այլն)։ Բաժինները կազմակերպվում են կոմիտեներին կից և անմիջականորեն նրանց են ենթարկվում։ Բաժիններ կազմակերպության կարգը որոշվում է Կենտկոմի կողմից հաստատված հատուկ հրահանգով։

18. Բոլոր ստորին կազմակերպությունները մինչև գավառայինները հաստատվում են գավառային կոմիտեի կողմից՝ նահանգային կոմիտեի թույլտվությամբ։ Գավառայինները՝ նահանգայինի կողմից—շրջանայինի թույլտվությամբ, իսկ այդ բացակայության դեպքում՝ Կենտկոմի թույլտվությամբ։ Նահանգայինները՝ շրջանայինի կողմից—Կենտկոմի թույլտվությամբ, իսկ շրջանայինի բացակայության դեպքում՝ անմիջականորեն Կենտկոմի կողմից։

19. Ամեն մի կազմակերպություն վերջնական հաստատումից հետո իրավունք ունի ձեռք բերել իր կնիքը, որ կարող է այլ երբ, բայց միայն կուսակցական համապատասխան բարձրագույն ատյանի թույլտվությամբ։

## IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

20. Կուսակցության գերագույն մարմինն է հանդիսանում համագումարը։ Հերթական համագումարները հրավիրվում են տարեցտարի։ Արտակարգ համագումարները հրավիրվում են Կենտկոմի նախաձեռնությամբ կամ կուսակցական վերջին համագումարին մասնակցող անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի պահանջով. կուսակցական համագումարի հրավիրումը և նրա օրակարգը հայտարարվում են ոչ ուշ, քան համագումարից ամիս ու կես առաջ։ Արտակարգ համագումարը հրավիրվում է երկու ամսվա ընթացքում։ Համագումարը համարվում է օրինական, եթե նրանում ներկա են կուսակցական վերջին համագումարին մասնակցած անդամների թվի կեսից ոչ պակաս։

Ներկայացուցչական նորմաները կուսակցական համագումարի համար սահմանվում են Կենտկոմի և նախահամագումարյան հերթական կոնֆերանսի կողմից։



21. Եթե վերևում ցույց տված ժամանակամիջոցի ընթացքում Կենտրոնական կոմիտեն արտակարգ համագումարը չի հրավիրել՝ նրա պահանջող կազմակերպությունները իրավունք ունեն ստեղծել կազմակերպչական կոմիտե, որն օգտվում է համագումարը հրավիրելու կենտրոնական կոմիտեի իրավունքներով։

22. Համագումարը՝ ա) լսում է և հաստատում է Կենտկոմի, վերստուգիչ հանձնաժողովի և այլ կենտրոնական հիմնարկների զեկուցումները, բ) քննում է փոփոխում է կուսակցության ծրագիրը, գ) որոշում է կուսակցության դիրքը ընթացիկ հարցերի վերաբերյալ, դ) ընտրում է կենտկոմ, վերստուգիչ հանձնաժողով և այլն։

23. Կենտկոմն ընտրվում է համագումարի որոշած [illegible] կազմով։ Կենտկոմի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է համագումարից ընտրված թեկնածուներից՝ համաձայն համագումարի ցույց տված կարգի։

24 Կենտրոնական կոմիտեն ներկայացնում է կուսակցությունը այլ կուսակցությունների և հիմնարկությունների հետ ունեցած հարաբերություններում, կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկները և ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է կենտրոնական օրգանների խմբագրություն, որոնք աշխատում են նրա հսկողությամբ, կազմակերպում է և վարում է ընդհանուր կուսակցական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, բաշխում է, բաժանում է կուսակցության ուժերը ու միջոցները և տնօրինում է կենտրոնական գանձարկղը։

Կենտրոնական կոմիտեն ուղղորդում է խորհրդային կենտրոնական և հասարակական կազմակերպությունների աշխատան-

քը՝ կուսակցական ֆրակցիաների միջոցով.

Կենտրոնական Կոմիտեն ունենում է ամիսը վոչ պակաս մեկ անգամից լիակազմ նիստ: Կենտկոմի թեկնածուները ներկա յեն լինում լիակազմի (пленум) նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

25. Քաղաքական աշխատանքը վարելու համար Կենտրոնական Կոմիտեն ստեղծում է Քաղաքական Բյուրո, կազմակերպչական աշխատանքների ընդհանուր ղեկավարության համար—Կազմակերպչական Բյուրո՝ 5—7 հոգուց բաղկացած և ընթացիկ կազմակերպչական գործադիր բնույթ կրող աշխատանքների համար ընտրում է Կենտկոմի 3 անդամից բաղկացած Քարտուղարություն, վորի անդամները մշտապես աշխատում են Քարտուղարության մեջ.

26. Տարին մեկ անգամ, կուսակցական համագումարների ընդմիջումի ընթացքում Կենտկոմը գումարում է Համառուսական Կուսակցական Կոնֆերանս, վոր կազմվում է կուսակցության յերկրային, շրջանային և նահանգային կոմիտեների, ազգային Կոմկուսակցությունների Կենտկոմների, Կենտկոմի շրջանային բյուրոների, Կարմիր բանակի և Նավատորմի քաղբաժինների ներկայացուցիչներից.

27. Յերկու ամիսը մեկ անգամ Կենտրոնական Կոմիտեն գրավոր հաշվետվություններ է ուղարկում Նահանգային Կոմիտեներին իր գործունեության մասին:

28. Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը կազմված է 3 անդամից, վորոնց կուսակցական ստաժը պիտի լինի 10 տարուց վոչ պակաս.

Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը ստուգում է. ա) գործերի կատարման արագությունն ու ճշտությունը կուսակցության կենտրոնական մարմիններում և Ռ. Կ. Կ. Կ. Կ. Քարտուղարության ապարատի կարգավորումը, բ) գանձարկղը և Ռ. Կ. Կ. Կ. Կ. ձեռնարկությունները.

## V ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29. Կուսակցական կազմակերպությունները Կենտկոմի թույլտվությամբ կարող են միավորվել ըստ շրջանների: Շրջանի սահմանները վորոշվում են շրջանային Կոնֆերանսից և հաստատվում են Կենտկոմի կողմից.

30. Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության ֆեդերատիվ տերրիտորիալ մասերին սպասարկող (обслуживающие) կուսակցական կազմակերպությունները միահավասարվում են կուսակցության շրջանային (կամ նահանգային) կազմակերպություններին, այսինքն՝ ամբողջապես յենթարկվում են Ռ. Կ. Կ. Կ. Կոմիտեյին.

31. Շրջանային կոմիտեն (կամ ազգային կոմկուսակցության կենտր. կոմիտեն) ընտրվում է շրջանային կոնֆերանսի (կամ ազգային կոմկուսի համագումարի).

Կենտկոմի հատուկ վորոշմամբ, այնտեղ ուր գոյություն ունեն շրջանային տնտեսական մարմիններ (տնտեսական խորհուրդներ և այլն), կամ կենտրոնից զգալիորեն հեռու գտնվող շրջաններում, ստեղծվում են Ռ. Կ. Կ. Կ. Կոմիտեյի կողմից նշանակված Շրջանային Բյուրոներ, վորոնց կազմը ամեն մի առանձին դեպքում վորոշվում է Կենտկոմից: Կենտկոմի շրջանային բյուրոները պատասխանատու են միմիայն Ռ. Կ. Կ. Կ. Կ.-ի առաջ.

32. Շրջանային հերթական Կոնֆերանսը (կամ՝ ազգ. կոմկուսի համագումարը) հրավիրվում է շրջանային կոմիտեի (կամ՝ ազգ. կենտկոմի) կողմից 6 ամսից հետո (այս միջոցը—срок—առանձին շրջանների համար կարող է Ռ. Կ. Կ. Կ. Կ.-ի թույլտվությամբ յերկարվել մինչև մեկ տարի). Արտակարգը հրավիրվում է շրջանային կոմիտեի (ազգ. կոմկուսի կենտկոմի) վորոշմամբ, կամ շրջանի կազմակերպություններում գրված անդամների ընդհանուր թվի կեսի պահանջով.

Շրջանային կոնֆերանսի ներկայացուցչական նորման (կամ՝ ազգ. կոմկուսի համագումարինը) սահմանվում է շրջանային կոմիտեի կողմից (ազգ. կոմկուսի կենտկոմից՝) շրջանի մեջ մտնող նահանգային կոմիտեների հետ համաձայնության գալով:

Շրջանային կոնֆերանսը (ազգ. կոմկուսի համագումարը) լսում է և հաստատում է Շրջանային կոմիտեի (ազգ. կոմկուսի կենտկոմի) հաշվետվությունները, ինչպես և վերստուգիչ հանձնաժողովի և շրջանային այլ կազմակերպությունների զեկուցումները, ընտրում է շրջանային կոմիտե և վերստուգիչ հանձնաժողով (կենտկոմ, Ազգկոմկուսի կենտր. վերստուգիչ հանձնաժողով).

33. Ընթացիկ աշխատանքների համար Շրջանային կոմիտեն ընտրում է 5 հոգուց վոչ պակաս մի բյուրո.

Շրջանային կոմիտեն (Կենտկոմի Շրջանային Բյուրոն) կազմակերպում է շրջանի սահմաններում կուսակցության զանազան հիմնարկները, ղեկավարում է նրանց աշխատանքը, նշանակում է շրջանային կուսակցական օրգանի խմբագրությունը, կազմակերպում և վարում է շրջանի համար ընդհանուր նշանակություն ունեցող ձեռնարկությունները. շրջանի սահմաններում բաշխե-

գրում է կուսակցության ույժերն ու միջոցները և տնօրինում է շրջանային դրամարկղը։ Շրջանային կոմիտեն (Կենտկոմի շրջանային բյուրոն) համաձայնեցնում է կուսակցական ֆրակցիաների միջոցով խորհուրդների գործունեությունը և ամսեամիս իր գործունեության հաշվետվություններ է ներկայացնում Ռ. Կ. Կ.Կ. Կոմիտեին։

Շրջանային կոմիտեն (Կենտկոմի շրջանային բյուրոն) ժողովվում է ամիսը մեկ անգամից ոչ պակաս։

## VI. ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

34. Կուսակցական նահանգային բարձրագույն կոնֆերանսը հրավիրվում է նահանգային կոմիտեի կողմից վեց ամիսը մեկ անգամ։ Արտակարգը հրավիրվում է նահանգային կոմիտեի որոշումով կամ նահանգի կազմակերպությունների մեջ մտնող անդամների ընդհանուր թվի մեկ—չորրորդի պահանջով։

Նահանգային կոնֆերանսը լսում է և հաստատում է նահանգային կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի և նահանգային այլ հիմնարկների հաշվետվությունները, ընտրում է կոմիտե և վերստուգիչ հանձնաժողով։

35. Նահանգային կոմիտեն ընտրվում է կոնֆերանսից, ընդ որում՝ նրա կազմի մեջ են մտնում ինչպես նահանգաքաղաքի, այնպես էլ նահանգի այլ կարևոր բանվորական կենտրոնների աշխատավորները։

Նահանգական կոմիտեն նիստեր է ունենում ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ։ Իր կազմից նահանգային կոմիտեն ընտրում է 5 հոգուց բաղկացած մի Բյուրո՝ ընթացիկ աշխատանքները վարելու համար, ըստ որում, անհրաժեշտության դեպքում, այդ թիվը կարող է ավելացվել, սակայն՝ Կենտկոմի համաձայնությամբ (կամ շրջաններում՝ Շրջկոմի համաձայնությամբ)։

Բյուրոյի կազմից ոչ պակաս, քան 3 հոգին պետք է վարեն միմիայն կուսակցական աշխատանք։

Նահանգային Կոմիտեի քարտուղարի համար պարտադիր է մինչև 1917 թվի Հոկտեմբերյան Հեղափոխությունը կուսակցական ստաժը և կուսակցական համապատասխան բարձրագույն ատյանի հաստատումը (միմիայն նրա թույլտվությամբ կարող են բացառություններ լինել այս կետի մեջ)։

36. Նահանգային կոմիտեն հաստատում է գավառային և նահանգի քաղաքային կազմակերպությունները՝ Շրջանի կոմիտեների կամ Կենտկոմի թույլտվությամբ, կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկներ նահանգի սահմաններում, ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է կուսակցական նահանգային օրգանի խմբագրությունը, որը աշխատում է նրա հսկողությամբ, կազմակերպում է բոլոր այն ձեռնարկությունները, որոնք նշանակություն ունեն ամբողջ նահանգի համար, բաշխում է նահանգի սահմաններում կուսակցության ուժերն ու միջոցները և տնօրինում է նահանգային դրամարկղը։ Նահանգային կոմիտեն ուղղում է արհմիությունների խորհրդի, կոոպերատիվ միությունների գործունեությունը համապատասխան կուսակցական ֆրակցիաների միջոցով։ Նահանգային կոմիտեն իր և իր գավառային կոմիտեների գործունեության ժամանակավոր հաշիվներն է ներկայացնում Կենտկոմին ամսեամիս։ Այնտեղ, ուր շրջաններ են, Շրջանային կոմիտեները հավասարեցվում են Նահանգային կոմիտեներին։



37. Նահանգային կոմիտեն երկու կոնֆերանսների միջև անցնող ժամանակամիջոցում պարբերաբար տեղեկացնում է կուսակցության անդամներին ընդհանուր ժողովին կամ քաղաքային կազմակերպության կոնֆերանսին։ Բացի այդ, Նահանգային կոմիտեները ոչ պակաս, քան 3 ամիսը մեկ անգամ հրավիրում են նահանգային խորհրդակցություններ՝ կազմված գավառային և քաղաքային կոմիտեների ներկայացուցիչներից, որոնք անմիջականորեն ենթարկվում են Նահանգկոմին։

38. Նահանգական քաղաքներում, նայելով պահանջին, հիմնվում են Ռայոնական կազմակերպություններ՝ գավկոմներին վերապահված իրավունքներով և անմիջական ենթարկմամբ Նահանգկոմին։

## VII ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

39. Գավառային կոնֆերանսը լսում է և հաստատում է գավառային կոմիտեի, գավառային վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները և ընտրում է գավառային կոմիտե և վերստուգիչ հանձնաժողով։ Կոնֆերանսը հրավիրվում է 6 ամիսը մեկ անգամ։

40. Գավառային կոմիտեն ընտրվում է գավառային կոնֆերանսից՝ 7 ից—9 հոգուց բաղկացած կազմով։ Գավառային Կոմիտեն իր կազմից ընտրում է 3 հոգուց բաղկացած մի Բյուրո, որի կազմից բոլոր աշխատանքներից, բացի կուսակցականը, ազատված պետք է լինեն ոչ պակաս, քան 2 հոգին։

Քարտուղարի համար պարտադիր է կուսակցական 3 տարվա ստաժը և համապատասխան բարձրագույն կուսակցական ատ-

յանի հաստատումը (միայն նրա թույլտվությամբ կարող են բացառություններ լինել ստաժի մեծության մեջ)։

41. Գավառային Կոմիտեն հաստատում է Նահանգային կոմիտեյի թույլտվությամբ գավառի վիճակային (волостные) կազմակերպություններն ու բջիջները, կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկները գավառի սահմաններում, ղեկավարում է նրանց գործունեությունը՝ կազմակերպում է գավառային ընդհանուր նշանակություն ունեցող բոլոր ձեռնարկումները, վոչ պակաս, քան 3 ամիսը մեկ անգամ խորհրդակցություններ է գումարում վիճակային բջիջների ներկայացուցիչներից և տնօրինում է կուսակցական գավառային գանձարկղը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կուսակցական օրգանի և կուսակցական գրականության հրատարակման իրավունքը գավառում պատկանում է միմիայն գավառային կոմիտեյին նահանգկոմի թույլտվությամբ։

42. Համապատասխան կուսակցական ֆրակցիաների միջոցով Գավառային կոմիտեն առաջնորդում է Գավգործկոմի և այլ միավորությունների աշխատանքները գավառի սահմաններում։

## VIII. ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

43. Վիճակի գերագույն օրգանն է հանդիսանում տվյալ վիճակի կուսակցական անդամների ընդհանուր ժողովը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Լայնարձակ վիճակներում, ուր դժվար է ընդհանուր ժողովի գումարումը, թույլատրվում է ընդհանուր ժողովի փոխարինումը վիճակային կոնֆերանսով։

44. Վիճակի ընդհանուր ժողովի գումարումը կայանում է վոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ։ Ընդհանուր ժողովը զբաղվում է հետևյալ հարցերով.—ա) լսում է կուսակցության անդամների ընդունելու և հեռացնելու խնդիրները, ներկայացնելով իր վորոշումները իրանից բարձր կանգնած կուսկոմների հաստատության, բ) ընտրում է վիճակային կոմիտե, գ) քննում է հաստատում է վիճակային կոմիտեյի հաշվեզեկույցը, դ) պատվիրակներ է ընտրում նահանգային, գավառային և այլ կոնֆերանսների համար, ե) քննում և հաստատում է վիճակային գործկոմի ֆրակցիայի հաշվեզեկույցը։

45. Վիճակային Կոմիտեն ընտրվում է ընդհանուր ժողովից կամ կոնֆերանսից՝ 3-5 հոգուց կազմով և 6 ամիս ժամանակով։

46. Վիճակային Կոմիտեն առաջնորդում է և ղեկավարում է վիճակի սահմանում բոլոր կազմակերպությունների աշխատանքները, վարում է կուսակցության բոլոր անդամների ցուցակագրությունը, կազմակերպում է գրականության տարածումը, (միտինգներ, դասախոսություններ և այլն), ստեղծում է նոր բջիջներ և ներկայացնում է նրանց գավառային կոմիտեյին հաստատության, տնօրինում է կուսակցական վիճակային գանձարկղը, ամիսը մեկ անգամ իր գործունեության հաշվեզեկույցն է ներկայացնում գավառային կոմիտեյին և կուսակցական ֆրակցիայի միջոցով առաջնորդում է վիճակային գործկոմի աշխատանքները։

## IX. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

47. Կուսակցական կազմակերպության հիմքն է կազմում կուսակցական բջիջը։ Բջիջը՝ կուսակցության վոչ պակաս 3 անդամի կազմով՝ հաստատվում է գավառային կամ ռայոնական կոմիտեյի կողմից։

48. Բջիջը այն կազմակերպությունն է, վոր տվյալ վայրում իրար է կապում բանվորա-գյուղացիական մասսաներին ու կուսակցության ղեկավար մարմինը։ Բջիջի նպատակն է.—ա) կուսակցական վորոշումները ու լոզունգները անցկացնել մասսաներում, բ) գրավել նոր անդամներ, գ) աջակցել տեղական կոմիտեյին՝ նրա կազմակերպչական և ագիտացիոն աշխատանքներում, դ) վորպես կուսակցական օրգանի՝ գործոն մասնակցություն ունենալ յերկրի տնտեսական և քաղաքական կյանքում։

49 Ընթացիկ աշխատանքները վարելու համար բջիջը ընտրում է 3 հոգուց բաղկացած մի բյուրո՝ 3 ամիս ժամանակով։

Բջիջի քարտուղարի համար պարտադիր է վոչ պակաս, քան մեկ տարվա կուսակցական ստաժը։ Բացառությունը թույլատրելի յե միմիայն գավկոմի (կամ Ռայկոմի) հայեցողությամբ։

## X. ՍՏՈՒԳԻՉ (контрольная) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

50 Կուսակցության միավորության և հեղինակության ամրապնդմանը նպաստելու համար կենտրոնում, շրջաններում և թե նահանգներում—համագումարին կամ շրջանային և նահանգային կոնֆերանսներին ընտրական ճանապարհով կազմակերպվում են ստուգիչ հանձնաժողովներ, վորոնք հաշիվ են տալիս իրանց գործունեության մասին իրանց ընտրող համապատասխան մարմինների առաջ։ Կենտրոնում Ստուգիչ Հանձնաժողովները ընտրվում են 10 տարվա ստաժ ունեցող 5 անդամի և 2 փոխան-

[illegible] կազմով, շրջանում՝ 3—5 անդամի և 3 փոխանդամի կազմով, նահանգում՝ 3 անդամի և 2 փոխանդամի կազմով ստաժը մինչև փետրվարյան հեղափոխությունը.

Ստուգիչ հանձնաժողովների անդամները, խորհրդակցական ձայնի իրավունքով, կարող են ներկա լինել համապատասխան կուսակցական կոմիտեների բոլոր նիստերին, ինչպես և համապատասխան կուսակցական կազմակերպությունների և ժողովներին։

Ստուգիչ հանձնաժողովների վորոշումները չեն կարող վերացվել համապատասխան կոմիտեների կողմից, բայց ուժ են ստանում վերջիններիս համաձայնությամբ և նրանց միջոցով են կիրառվում կյանքում։

Անհամաձայնության դեպքում խնդիրը փոխադրվում է միացյալ նիստի քննությանը. Եթե կոմիտեի հետ համաձայնություն չի կայանում, ապա հարցը հանձնվում է համապատասխան կուսակցական կոնֆերանսին ի լուծումն կամ՝ գերագույն ստուգիչ հանձնաժողովին։

Ծանոթություն.—Կենտրոնական շրջանային բյուրոներին կից Ստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում. Նահանգային Ստուգիչ հանձնաժողովի վերոհիշյալ այն դեպքում, երբ նրա գծով ստուգություն կամ բողոք կա, Երկրային վերաստուգության հետ միասին հանձնվում է Կենտրոնական Ստուգիչ հանձնաժողովին (Կ. Ս. Հ.).

# XI. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

51. Կուսակցական խիստ կարգապահությունը առաջնագույն պարտականությունն է կուսակցության բոլոր անդամների և կուսակցական բոլոր կազմակերպությունների։ Կուսակցական կենտրոնների վորոշումները պետք է կատարվեն արագ և ճշտիվ։ Միաժամանակ կուսակցական կյանքի վերաբերյալ բոլոր վիճելի հարցերի քննությունը կուսակցության մեջ միանգամայն ազատ է մինչև այն մոմենտը սակայն, քանի դեռ վորոշումը չէ ընդունված։

52. Բարձրագույն կազմակերպությունների վորոշումները չկատարելը և այլ զանցանքները, վորոնք հանցավոր են համարվում կուսակցության հասարակական կարծիքի կողմից, առաջ են բերում կազմակերպությունների համար—կշտամբանք, վերևից ժամանակավոր կոմիտեի նշանակում, ընդհանուր վե-



րեգիստրացիա (կազմակերպության արձակում)։ Կուսակցության առանձին անդամների համար—կուսակցական կշտամբանք, հրապարակային կշտամբանք, ժամանակավոր հեռացում պատասխանատու կուսակցական և խորհրդային աշխատանքից, ժամանակավոր հեռացում կուսակցությունից, հեռացում կուսակցությունից՝ պարտ զանցության մասին հայտնելով վարչական և դատական իշխանություններին։ Փոխադրումը կանդիդատական վիճակի, վորպես կուսակցական պատժի միջոց՝ չի թույլատրվում։

53. Կարգապահական պատասխանատվությունները քննվում են կոմիտեների, ընդհանուր ժողովների և ստուգիչ հանձնաժողովների կողմից սովորական կարգով՝ ըստ հաստատված ատյանների

# XII ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

54. Կազմակերպության դրամական միջոցները գոյանում են անդամավճարներից, կուսակցական բարձրագույն կազմակերպություններից ստացված նպաստներից և այլ հասույթներից։

55. Կուսակցության անդամների և թեկնածուների համար անդամավճարը սահմանվում է վոչ պակաս, քան աշխատավարձի կես տոկոսը։ Սահմանվում է անդամավճարի չափի 4 կատեգորիա՝ ըստ աշխատավարձի չափի առանց ռուբլիների։ 1-ին կատեգորիան վճարում է կես տոկոս, 2-րդ—մեկ տոկոս, 3-րդ—երկու տոկոս և 4-րդ երեք տոկոս։ Հարկային աշխատավարձի դասակարգման թվերը սահմանվում են հրահանգներով։

56. Անգործ նպաստ ստացողների, ինչպես և գյուղացի համար անդամավճարները սահմանվում են տեղական նահանգային կոմիտեներից, համաձայնեցնելով Կենտկոմի հրահանգներին։

57. Բոլորովին ազատվում են անդամավճար մուծելուց զորակոչվածները և սոցիալական ապահովությունից օգտվողները (հաշմանդամները, ծերունիները)։

58. Մուտքի վճարները գանձվում են ինչպես կուսակցության անդամներից, այնպես էլ թեկնածուներից՝ աշխատավարձի 3 տոկոսի չափով և նրանց վճարումից վոչ վոք չի ազատվում։

59. Կուսակցության անդամները և թեկնածուները, վորոնք 3 ամսվա ընթացքում առանց հարգելի պատճառների չեն վճարել անդամավճարները, համարվում են կուսակցությունից դուրս եկած, վորի մասին և հայտնվում է ի գիտություն ընդհանուր ժողովի։

## XIII. ԱՐՏԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼԻՔ ՖՐԱԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*60. Անկուսակցական բոլոր համագումարներին, խորհրդակցություններին և ընտրական մարմիններում (խորհուրդներ, խորհուրդների գործկոմներ, Արհմիությունների կոմիտեներ և խորհուրդներ, կոոպերատիվների վարչություններ և այլն), ուր կա կուսակցական վոչ պակաս քան 3 անդամ, կազմակերպվում են ֆրակցիաներ, վորոնց նպատակն է բազմակողմանի կերպով զորեղացնել կուսակցության ազդեցությունը, արտակուսակցական միջավայրում անցկացնել կուսակցական քաղաքականությունը և կուսակցական վերահսկումն հաստատել բոլոր այդ հիմնարկների և կազմակերպությունների աշխատանքի վրա։*

*61. Երբ կոմիտեներում քննվում են վորևէ ֆրակցիային վերաբերյալ հարցերը, վերջինս իր ներկայացուցչին է ուղարկում համապատասխան կոմիտեի լիակազմ նիստին խորհրդակցական ձայնով։ Ընթացիկ աշխատանքի համար ֆրակցիաները կարող են ընտրել բյուրո։*

*62. Ֆրակցիաները անկախ իրենց նշանակությունից ամբողջովին յենթարկվում են համապատասխան կուսակցական կազմակերպություններին։ Բոլոր այն հարցերում, վորոնց մասին կուսակցական համապատասխան կազմակերպությունը ունի որինական վորոշումներ, ֆրակցիաները պարտավոր են խստիվ կերպով և անշեղորեն ղեկավարվել այդ վորոշումներով։ Կոմիտեն իրավազոր է նոր մարդ մտցնել ֆրակցիան և հետ կանչել վորևէ մեկին, ընդսմին տեղեկացնելով ֆրակցիային իր այդ քայլերի պատճառների մասին։ Իր ներքին և ընթացիկ աշխատանքի խնդիրներում ֆրակցիան ավտոնոմ է։ Յեթե կուսակցական կոմիտեի և ֆրակցիայի միջև կարևոր տարաձայնություն առաջ գա վորևէ այնպիսի խնդրի շուրջը, վոր մտնում է ֆրակցիայի իրավասության մեջ, կոմիտեն պարտավոր է կրկնակի քննության յենթարկել այդ խնդիրը ֆրակցիայի ներկայացուցիչների հետ միասին և կայացնել վերջնական վորոշում, վորն անմիջապես պետք է կատարվի ֆրակցիայի կողմից։*

*63. Բոլոր այն կազմակերպություններում, ուր աշխատում է ֆրակցիան, կարևորագույն պաշտոնների թեկնածուները առաջարկվում են ֆրակցիայի կողմից՝ համապատասխան կուսակցական կազմակերպության հետ միասին։ Նույն ճանապարհով է կատարվում և փոխադրումը մի պաշտոնից՝ մյուսը։*

*64. Բոլոր այն հարցերը, վորոնք ունեն քաղաքական նշա-*

ՀՀ Ազգային գրադարան
NL0188270

3КП2
П2 - 11